ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 082

ԱԲԳԱՐ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Աբգար Ավետիսյանը, հանդիսանալով փոխադրամիջոցի գույքահարկ վճարող սուբյեկտ, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով չի կատարել փոխադրամիջոցի գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2020 թվականի փետրվարի 25-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Արենիի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ փոխադրամիջոցի գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն՝ Արենիի համայնքապետարանի ֆիզիկական անձանց գույքային հարկերի պարտավորության ամփոփ ցուցակի ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնքի Արփի բնակավայրի բնակիչ Աբգար Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող MERCEDES-BENZ S500 4MATIC մակնիշի 16 SP 016 պետհամարանիշի փոխադրամիջոցը հանդիսանում է «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի և 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 3-րդ ենթակետի հիմքով հարկվող օբյեկտ: